ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

28 ՓԵՏՐՎԱՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Սամվել Գրիգորյանը, Գարիկ Մկրտչյանը, Վարդան Սամսոնյանը, Էդիկ Տիգրանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սեդրակ Սաֆարյան, Ռաֆֆի Գասպարյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայքի ավագանու 2022 թվականի փետրվարի 28-ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը

1.Ակունքի համայնքի կամավոր խնդիրները,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությանները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:

2.Ակունք համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին:

3.Հողամասերի օտարման մասին
4.*Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 7 կետի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածի, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել համայնքի կամավոր խնդիրները,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը համաձայն հավելվածի :
2.Ուժը կորցրած ճանաչել 2018թվականի մայիսի 18-ի «Ակունք համայնքի ղեկավարի կամավարի խնդիրները,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 31 որոշումը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐՈՋ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 26-րդհոդվածի 3-րդ մասը՝ Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը՝համաձայն հավելվածի:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ, 67-րդ,71-րդ հոդվածների,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի,համայնքի հողերի օգտագործման սխեմային համապատասխան, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը օտարել.
1) աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված 1-ի,
2)հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի օտարումը փոխանակման միջոցով՝համաձայն հավելված 2-ի,
3) ուղղակի վաճառքի միջոցով,ընդլայնման նպատակով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված3-ի
2.Ակունք համայնքի սեփականություն ճանաչված գույքը օտարել ինքնակամ շինությունը կառուցողին ուղղակի վաճառքով և հաստատել ուղղակի վաճառքի գին համաձայն հավելված 4-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 14/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010թվականի հունիսի 1-ի թիվ 186 -Ն հրամանը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Բնակավայրի նշանակության հողամասը ճանաչել Ակունք համայնքի սեփականություն համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 15/

Ավագանու անդամներ

ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵԽԱԿ ՄԵԽԱԿՅԱՆ

ԳՈՌ ՄԿՐՏՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը